ԲԱՅՑ ԶԷՆ Ի ՁԵՌ ՈՏՔԻ ԿԱՆԳՆԵՑԱՆ

Շահումեանի շրջանում վերջին օրերին կատարուող իրադարձութիւնները, այս էլ որերորդ անգամ, ապացուցում են, որ Արցախեան հարցը «բաղաքական» լինելուց վաղուց է դադարել, որ Արցախում մղւում է իսկական պատերազմ:

Նիկոլայ Հայրապետեան

Օրեր առաջ դատարկուեցին Բուզլուխը, Մանաշիդը, Էրքեջը, որոնց բնակիչները պատսպարուել են մերձակայ անտառներում: Եւ ահա, յուլիսի 20ին նորից ուժեղ ռմբակոծութեան ենթարկուեցին խորհրդային զօրքերով, ՕՄՕՆականներով, զրահամեքենաներով ու տասնեակ հրասայլերով: Նախորդ օրը, Վերին Շէնի վրայով ամբողջ օրը թռել են զինուորական ուղղաթիռներ: Այդ ուղղաթիռներից օրուայ երկրորդ կէսին, գիւղից երկու քիլոմեթրի վրայ դեսանտ է իջեցուել, ժամը 16ին դեսանտ է իջեցուել նաեւ Էրքեջի եւ Բուզլուխի միջեւ: Դեսանտայինները յարձակուել են եւ անտառում պատսպարուածների վրայ: Հայ ինքնապաշտպանական ուժերը հերոսական դիմադրութիւն ցոյց տուեցին՝ չընկրկեցին նոյնիսկ հրասայլերի ու զրահամեքենաների առջեւ, որոնցից մէկը ոչնչացրին: Կռիւն անհաւասար էր, սակայն ՕՄՕՆականներին եւ խորհրդային բանակին չյաջողեցաւ յաղթահարել մեր պաշտպանական գծերը: Սա ռազմական յաղթանակ էր, նաեւ՝ ոգու յաղթանակ: Մեր կողմից եղան 16 վիրաւորներ եւ 4 զոհ, 4 քաջարի հայորդիներ, որոնք գնացինմիանալու անմահների փաղանգին՝ իրենց արեամբ եւս մի անգամ վերյիշելով, որ հայրենի հողը կանգուն է միայն յարատեւ կռուով, միայն արեամբ: Հպարտութեամբ, նաեւ դառն ափսոսանքով պէտք է յիշել նրանց պայծառ անունները:



Զիւան Աբրահամեան

Յաւերժ փառք նրանց:

Համոզուած ենք, որ ոտքի կ'ելնեն նոր հերոսներ՝ հայ քաջորդիների արեամբ սրբացած Շահումեանի հողը պաշտպանելու համար: (Յուլիս 1991):

«ԱԶԱՏԱՄԱՐՏ»